ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ — РЕЦЕНЗИИ

Լ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ, Հայ գրական քննադատությունը XIX դարի 70—80-ական թվականներին, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1979, 350 էջ։

XIX դարի երկրորդ կեսը մեր ժողովրդի կյանքում փոթորկալից շրջան էր ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ գեղարվեստական առաջընթացի տեսակետից։ Այդ շրջանի քննադատական միտքն ուսումնասիրող գիտնականները հաճախ են բանավիճել թե՛ սոցիալ-քաղաքական, գրական-հասարակական տեղաշարժերի, և թե՛ ազգային մշակույթի մեջ առանձին գործիչների կատարած ներդրումների գնահատության հարցերի շուրջը։

XIX դարի 70—80-ական թթ. գեղարվեստական առաջընթացի տեսակետից նախանշում էին հայ հասարակական և գրական կյանքի մի նոր շրջափուլ։ Առաջին հայացքից թվում է, թե հիշյալ քսանամյակի գրաքննադատությունը ուսումնասիրված է տարբեր առումներով, առանձին գրողների գրական ժառանգության գնահատման, աշխարհայացքային ըմբռնումների բացահայտման միջոցով։ Սակայն այդ պրոբլեմը ըստ էության չի դրվել, կամ լուծվել է մասնակի խնդիրների ձևով։

Հայ գրաքննադատությունը սկզբնավորվել է ավելի վաղ շրջանում, հայ նոր գրականության ստեղծման հետ միասին։ Այնպես որ Լ. Ասմարյանի սույն ուսումնասիրությունը ամփոփում է գրաքննադատության երկրորդ շրջափուլը, երբ քննադատությունը իր ինքնուրույնությունը հաստատելու ճանապարհին ձգտում էր կազմակերպել գրականությունը և գիտականորեն հիմնավորել նրա օրինաչափությունները։ Քննադատները վարում էին բազմաբնույթ բանավեճեր, որոնք բարենպաստ միջավայր էին ստեղծում ընդհանուր զարգացման համար։ «Արևելյան մամուլի», «Մեղու Հայաստանի», «Մշակի», «Փորձի», «Գործի», «Արձագանքի», «Նոր դարի» շուրջը համախմբված քննադատները բաժանում էին տագնապալից անհանդուրժողությունը գրականության բախտի համար։ Չէին բացառվում և ծայրահեղությունները։ Սակայն կարևորը ոչ թե դրանք էին կամ չափազանցությունները, այլ այն, որ դրանք շատ բան են տվել գրականությանը նրա դժվարին գոյամարտի պայմաններում։

Գրախոսվող աշխատության հեղինակը ցույց է տվել, որ այս շրջանի քննադատները ժառանգել էին նախորդների քաղաքացիական ոգին և հրապարակախոսական շունչը և դրանք զարգացնում էին բարոյագիտական թեքումով։ Տարբերությունն այն էր, որ նրանք ստեղծագործում էին նոր իրադրության մեջ և նոր նյութի հիման վրա։ Նրանք թեև պրոֆեսիոնալներ չէին, բայց աշխատում էին քննադատությունը մղել դեպի ինքնուրույնության և մասնագիտացման ճանապարհը, յուրացնել ժամանակի գրական-գեղագիտական ձեռքբերումները, որոնք գալիս էին եվրոպական և առաջին հերթին՝ ռուսական միջավայրից։

Գրականագետը տեղին է նկատում, որ հայ քննադատական միտքը, շփվելով եվրոպական և ռուսական փիլիսոփայական-գեղագիտական ուղղությունների հետ, գործնականորեն օգտվել է նրանց առաջ քաշած որոշ դրույթներից, սակայն՝ հաշվի առնելով տեղական պայմանները։ Կենսական պահանջներից է բխել, օրինակ, Գր. Արծրունու, Ա. Արփիարյանի, Ե. Տեմիրճիպաշյանի և այլոց շփումը Օ. Կոնտի փիլիսոփայության հետ։ Մանավանդ բավական հստակ է ներկայացված հայ քննադատական մտքի զարգացման ուղղությամբ XIX դարի ռուսական գեղագիտական մտքի խաղացած դերը։ 1870—1880-ական թթ. սերունդը շատ գծերով առընչվում էր ռուս գրաքննադատության մեծ ներկայացուցիչների՝ Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և այլոց ժառանգությանը կյանքի և գրականության հարաբերության և այլ հարցերի կապակցությամբ։

Լ. Ասմարյանի մենագրության մեջ ի մի են բերված հայ գրականության և քննադատության երկու հատվածները՝ արևելահայ և արևմտահայ ու այդ երկուսը դիտված են իբրև մի ժողովրդի ընդհանուր և միասնական սեփականություն։ Ճիշտ է, հայության երկու հատված-

ները գտնվում էին տարբեր քաղաքական ոլորտների մեջ, բայց գրականությունը և քննադատությունը միավորում էին ժողովրդի ոգին, ինքնուրույն նկարագիրը։ Հեղինակը կարողացել է ցույց տալ երկու հատվածների քննադատների ձգտումը՝ ժողովրդի ոգին գրականության մեջ ավելի վառ դրսևորելու առումով։ Բայց որտե՞ղ էր ի հայտ գալիս այդ ոգին, նրա ինքնուրույնությունը, եթե ոչ այն հատվածում, որն ավելի սերտ էր կապված մայր հողին, ժողովրդական դարավոր ավանդույթներին և վարք ու բարքին։ Ժողովրդական առողջ արմատին դիմելու կոչ էին անում Մ. Մամուրյանը, Կ. Տյուրյանը, Ա. Արփիարյանը։ Նրանք մատնացույց էին անում արևելահայ գրականությունը, որտեղից շատ բան կարելի էր սովորել ու տարածել ընդհանուր ազգային գրականության մեջ։ Սա քննադատության դասերից մեկն էր։

Մենագրության մեջ ցույց է տրվում առաջավոր քննադատության դերը ռուս գրականության փորձի տարածման ուղղությամբ։ Գր. Արծրունին, Ս. Հախումյանը, Կ. Տյուրյանը և ուրիշներ կոչ էին անում ավելի ուշադիր լինել դեպի այդ մեծ հարստությունը՝ հայ նոր գրականության զարգացման գործը ապահովելու համար։

Այս շրջանում ընդգծվում է պայքարը «արվեստը արվեստի համար» տեսության դեմ։ Գր. Արծրունին, Րաֆֆին և ուրիշներ պաշտպանում էին «արվեստը կյանքի համար» սկզբունքը գրականության և քննադատության մեջ։ Ընդհանրապես Գր. Արծրունին առաջիններից էր, որ պաշտպանում էր ռեալիզմը, գրականության հասարակական նշանակությունը՝ օգտապաշտության դիրքերից, քննադատում պատմական ողբերգությունները, որոնք, ճիշտ է, հայրենասիրական գաղափարներ էին արթնացնում հասարակության մեջ, բայց նոր ժամանակներում չէին նպաստում ժողովրդի գեղարվեստական առաջընթացին։ Այդ նույն տեսակետից թույլ էին նաև եվրոպական մելոդրամայի հնացած արտադրանքները։ Դրանց փոխարեն Գր. Արծրունին պաշտպանում էր ռեալիստական գրականությունը, մասնավորապես կենցաղային դրամատուրգիան։ Րաֆֆին և Արծրունին գրականության անձնաքննական ուղղության կողմնակիցներ էին։ Նրանք գտնում էին, որ եթե համաշխարհային գրականության մեջ մեծ դեր են կատարել Գյոթեն, Շիլլերը, Շեքսպիրը և ուրիշներ, իրենց գեղարվեստական գրվածքներով ազդել ազգերի մտավոր և բարոյական կյանքի վրա, ապա առավել մեծ դեր են կատարել Ֆրանսիայում Վոլտերը, Գերմանիայում Հայնեն, Ռուսաստանում Գոգոլը՝ դիմելով ինքնաքննադատության-ինքնաքննման մեթոդին։

«Սալբիի» առաջաբանում Րաֆֆին գրում էր. «Ռոմանները են այն կախարդական հայելիքը, որոնց մեջ ազգերը՝ տեսանելով յուրյանց կյանքի տգեղ և ավերված պատկերքը, յուրյանց մոլորությունների ամոթալի նկարագիրքը, ուսանում են շինել և բարեկարգել յուրյանց դրությունը»[1]։

Րաֆֆին պաշտպանում էր ռոմանտիկական վեպի տեսությունը, որը առաջադիմական նշանակություն ուներ ոչ միայն նախորդ, այլև 1870—80-ական թթ.։ Նա տվել է ծրագրային, ժամանակակից վեպի տեսությունը՝ կապված ժողովրդի ազատագրական ձգտումների հետ։ Այդ առթիվ Րաֆֆին սուր բանավեճ էր վարում «Մեղու Հայաստանի» լրագրի աշխատակից Հայկունու հետ, որը հակադրվում էր գրող քննադատի ազատագրական միտումներին։

Լ. Ասմարյանը ցույց է տալիս, որ Րաֆֆին ստեղծել է նաև հայ պատմավեպի տեսությունը։ Ըստ վերջինիս՝ գրողին նյութ է տալիս ոչ միայն ժամանակակից կյանքը, այլև պատմական անցյալը։ Բայց այդ անցյալը ևս քննադատը փորձում էր ծառայեցնել իր ժամանակի կարևոր խնդիրներն արծարծելու նպատակին։ Րաֆֆին, իհարկե, չէր ժխտում գեղարվեստական երևակայության դերը, բայց նա դեմ էր սին երևակայությանը և այդ առումով չէր ընդունում Ալ. Դյումային։

Գրական քննադատությանը խոշոր ծառայություն է մատուցել Ստ. Պալասանյանը, որը Մ. Մամուրյանի և Րաֆֆու նման պաշտպանում էր իր ժամանակի ռոմանտիկական գրականության ավանդույթները։ Նրա քննական վերլուծությունները Սերվանտեսի, Շեքսպիրի և այլ հեղինակների վերաբերյալ արժեքավոր շատ բան են պարունակում։

Լ. Ասմարյանը անդրադառնում է նույն թվականների ռեալիստական գրականության ու քննադատության հաստատման գործում Հ. Պարոնյանի ջանքերին, որի քննադատական ժառանգությունը ժամանակակիցների կողմից թերագնահատվել է։ Խիստ սկզբունքային էր Պարոնյանը, երբ պայքարում էր բանաստեղծության, դրամատուրգիայի, վիպագրության մեջ առկա սխալ միտումների դեմ։ Պայքարելով ռեալիզմի հաստատման համար, նա ցույց էր տալիս այն թերություններն ու ճեղքվածքները, որոնք քննություն չէին բռնում ռեալիստական գեղագիտության տեսանկյունից։ Հիշենք Ս. Տյուսաբի «Մայտա» վեպի վերաբերյալ նրա դիտողությունները ժամանակին այդ վեպի շուրջը

---

[1] Ր ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1962, էջ 65։

նշանավոր գրողների ու քննադատների կողմից ծավալած բանավեճի տեսադաշտի վրա։ Եթե Պարոնյանը աշխարհայացքային առումով հրատակ էր և սկզբունքային, ապա Ե. Տեմիրճիպաշյանի մոտ իշխողը էկլեկտիզմն էր։ Լ. Ասմարյանը ցույց է տալիս քննադատի այս ներքին հակասականությունը։ Մի կողմից համաշխարհային մեծությունների գնահատում, Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպի պաշտպանություն, որ ռեալիստական սկզբունքի պաշտպանություն էր և մյուս կողմից ռոմանտիզմի ու Նիրվանայի քարոզ։ Սակայն այդուհանդերձ, նա շատ բան է արել 1880-ական թթ. հայ ռեալիզմի սկզբունքների հաստատման համար և Հ. Պարոնյանի ու Կ. Տյուրյանի հետ անպայմանորեն արևմտահայ ուսումնականների նախապատրաստողներից մեկն է։

Գրական իրապաշտական ուղղության հաստատման պայքարին մեծ ուժեր նվիրաբերեց «Արևելք» թերթի գրական շարժման ղեկավար Ա. Արփիարյանը, որն իր շուրջը համախմբեց երիտասարդությանը (Գ. Զոհրապ, Տ. Կամսարական, Լ. Բաշալյան)։ Նա առաջ էր քաշում և ռոմանտիզմի ուղղությունից օգտվելու հարցը, բայց ըստ էության, ամենահեռանկարայինը ռեալիստական գրականությունն էր և իրև քննադատ Արփիարյանը պայքարում էր այդ գրականության համար։ Մեր օրերում, հատկապես վերջին տասնամյակում, գրականագիտության մեջ ընդգծվել է մի միտում. դա գրողի ստեղծագործական լաբորատորիայի ուսումնասիրության հարցն է։ Լ. Ասմարյանն այդ ձգտումը նկատել է և Ա. Արփիարյանի մոտ։ Գրողն, ըստ Արփիարյանի, ժողովրդի ապրումների թարգմանն է։ Հակադրվելով Ստ. Պալասանյանին, որ աղքատ էր համարում հայ կյանքը, որն իբր գրելու նյութ չէր տալիս, Արփիարյանը հայ գրողի նյութը համարում էր անսպառ. «...Մեր կյանքը խորհրդածության և նկարագրության այնքան առատ նյութ կրնա մատակարարել պատմաբանին ու վիպասանին, հնագետին ու հոգեբանին, իմաստասերին ու բանաստեղծին, որքան թերևս կարող չըլլա ընֆայել օտար ազգերե շատերու կյանքը»2։

2 «Արևելք», 1889, 23 փետրվարի։

Լ. Ասմարյանը բացահայտում և հերքում է 1880-ական թթ. մասին եղած թյուր կարծիքները։ Այն տեսակետն, օրինակ, թե 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հուսալքման տարիներ էին և գրականության զարգացումը դրանով էր պայմանավորված, նա համարում է սխալ, քանի որ գրաքննադատության տված փաստերը այլ բան են վկայում։ Ազատագրական ձգտումները չմարեցին, պարզապես դրանց առկայությամբ ուշադրությունը բևեռվեց ներքին հոգսերի վրա։

Լ. Ասմարյանի ուշադրությունից չեն վրիպել 1880-ական թթ. քննադատության նոր երևույթները՝ ռեալիզմի նոր, քննադատական փուլի, դեմոկրատիզմի և ժողովրդայնության գաղափարի խորացման հարցերը Ալ. Շիրվանզադեի, Մ. Աբեղյանի (Վարսամ), Գ. Ենգիբարյանի և այլոց հայացքներում։

Գրախոսվող աշխատության մեջ միաժամանակ ցույց են տրվում այն ակունքները, պայմաններն ու հանգամանքները, որոնց շնորհիվ հասունացան հայ նոր բանաստեղծության մեծերը՝ Հովհ. Հովհաննիսյանը, Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը։

Մի ցանկություն. թեկուզև աչքաթող չեն արվել ազգային հասարակական հոսանքները, սակայն Լ. Ասմարյանը քիչ է ուշադրություն դարձրել 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ազդեցությանը հայ գրականության վրա։ Միաժամանակ վերոհիշյալ քսանամյակի հայ գրաքննադատական մտքը գնահատող այսօրվա գիտնականների հետ նա քիչ է բանավիճում։ Իսկ դա մեծ շնչառություն կտար նրա առաջ քաշած դրույթներին, կհաներ նրան փաստերի՝ որոշ դեպքերում նկատվող էմպիրիկ շարադրանքից, և աշխատությունը սրանից անպայման կշահեր։

Լ. Ասմարյանի մենագրությունը առաջինն է XIX դարի 70—80-ական թթ. հայ գրական քննադատության գիտական ուսումնասիրության բնագավառում և օգտակար կլինի հայ քննադատական մտքի պատմությունը ամբողջացնելու և ընդհանրացնելու հետագա ջանքերում։

Բանասիր. գիտ. թեկնածու
Ռ. Մ. ՍԱՀԱԿՅԱՆ